# ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

Սիրելի՛ ուսուցիչներ, դաստիարակներ, կրթության համակարգի աշխատակիցներ, սիրով շնորհավորում եմ Ձեզ՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ:

Ձեզ է վերապահված մեր պետության ապագա քաղաքացիների կրթության ու դաստիարակության դժվարին, միաժամանակ՝ պատվաբեր ու պատասխանատու գործը:

Այսօր մեր երկրի առջև ծառացած աշխարհաքաղաքական բարդ խնդիրների լուծման գործում անուրանալի է Ձեր տքնաջան և հերոսական աշխատանքը, որի կենդանի վկայությունը քառօրյա պատերազմի ժամանակ մեր երեկվա դպրոցականների անօրինակ սխրանքն է:

Որպես ուսուցանող և դաստիարակող, Դուք կատարում եք Ձեր պատմական առաքելությունը:

Ցանկանում եմ, որ մշտապես լինեք Ձեր սաների և մեր կողքին, Ձեր նպաստը բերեք Հայաստան աշխարհի զարգացմանն ու շենացմանը, Ձեր եռանդը, խորհուրդներն ու իմացությունն ծառայեցնեք ի բարօրություն մեր երեխաների, մեր վաղվա օրվան:

Ամենայն բարիք և հաջողություն Ձեզ:

Մասիսի քաղաքապետ՝ Ս. ՀԱԿՈԲՅԱՆ

Մասիս 2016թ.